«Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ

0033,ք. Երևան
Մարշալ Բաղրամյան պողոտա 51ա
հեռ. 010272760 էլ. փոստ pol.8@mail.ru

N ___________

«27_» _փետրվար_ 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում
կատարելու ընթացակարգի հնրավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ Երևանի «Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Պոլիկլինիկա) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում N «ՀՀ Ե8Պ-ՇՀԱՊՁԲ-15/6»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Բաղրամյան 51ա հասցեով մինչև 2015թ. մարտի 11-ը, ժամը 12:00-ն:

Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Գ. Ավագյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Պոլիկլինիկայի շենքում, ք. Երևան, Բաղրամյան 51ա հասցեում, 2015թ. մարտի 11-ին, ժամը 12:00-ն:

Գնման առարկա է հանդիսանում Պոլիկլինիկայի կարիքների համար՝ բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերումը:

Պոլիկլինիկայի կարեքների համար՝ բժշկական սարքավորումների և պարագաների մատակարարման (3 չափաբաժին) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) թիվ 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով /անհրաժեշտ է ներկայացնել նաև գնային առաջարկի էլեկտրոնային տարբերակը՝ ցանկալի է EXCEL ծրագրով՝ էլեկտրոնային կրիչով/:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Պոլիկլինիկայի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ pol.8@mail.ru:

Հեռախոս՝ (010) 27 27 60:

Պատվիրատու՝ Երևանի «N 8 պոլիկլինիկա» ՓԲԸ:

Հարգանքով՝

Ա. Հարությունյան